

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասում երկրորդ «և» բառը փոխարինել ստորակետով, իսկ «օրենքով» բառից հետո լրացնել «և այլ օրենքներով» բառերը.

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի երրորդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.
«Համայնքի անունից համայնքի ավագանին իրականացնում է համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթներ:»

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.
«Սույն օրենքի իմաստով աշխատակազմ է համարվում. քաղաքային համայնքում՝ քաղաքապետարանի, իսկ գյուղական համայնքում՝ գյուղապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ աշխատակազմ):»

Հոդված 4. Օրենքի ամբողջ տեքստում «համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերը փոխարինել «աշխատակազմ» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.

Հոդված 5. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում.

- 1) հանել 17-րդ կետը.
- 2) 26-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26) համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունների, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատելու վերաբերյալ:»

Հոդված 6. Օրենքի 3-րդ գլխի վերնագրից հանել «նրա» բառը.

Հոդված 7. Օրենքի 28-րդ հոդվածի.

- 1) 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «իր աշխատակազմի» բառերը փոխարինել «աշխատակազմի» բառով.
- 2) 2-րդ մասի «հիմնարկների» բառից հետո լրացնել «կանոնադրությունները», իսկ երկրորդ «նաև» բառից հետո՝ «աշխատակիցների թվաքանակը,» բառերը.

- 3) 5-րդ մասում «ղեկավարի հաստատման» բառերը փոխարինել «ղեկավարին» բառով.

Հոդված 8. Օրենքի 30-րդ հոդվածում.

- 1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 մաս.

«1.1. Աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:»:

2) 6-րդ մասի երկրորդ պարբերությունում «ղեկավարը» բառը փոխարինել «ավագանին» բառով.

Հոդված 9. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը,»

2) 4-րդ կետի «հիմնարկների» բառից հետո լրացնել «կանոնադրությունների,» բառը.

Հոդված 10. Օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասից հանել «իր» բառը.

Հոդված 11. Օրենքի 75-րդ հոդվածի.

1) 1-ին մասից հանել «Երևանում՝ թաղային,» բառերը,

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնավարման ընթացքում չեն կարող կատարվել աշխատակազմի կառուցվածքային և (կամ) հաստիքացուցակի փոփոխություններ:»

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
 «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկություն	Եզրակացություն
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ. Նաղդալյան	Առաջարկում եմ լրամշակել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը՝ առաջարկվող լրացումը տեղափոխելով օրենքի 11-րդ հոդվածով սահմանված՝ համայնքի ավագանու գործունեության կազմակերպման հիմնական դրույթներից հետո:	Ընդունվել է, առաջարկվող լրացումը տեղափոխվել է 11-րդ հոդվածի 3-րդ մասից հետո:
2	ՀՀ կառավարություն	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում առաջարկվում է լրացնել նոր 3-րդ և 4-րդ հոդվածներ՝ հետևյալ խմբագրությամբ՝ ՀՈՂՎԱԾ 3 «ՀՈՂՎԱԾ 48.1. Երևանի գլխավոր ճարտարապետը «1. Երևանն ունի Երևանի գլխավոր ճարտարապետ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը: 2. Երևանի գլխավոր ճարտարապետը կարող է ունենալ օգնական, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը»: ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը «վարչական շրջանների ղեկավարների,» բառերից հետո լրացնել «Երևանի գլխավոր ճարտարապետի,» բառերով:	Ընդունվել է, նախագիծը լրացվել է նոր 3-րդ և 4-րդ հոդվածներով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ հոդվածների համարակալումը: Միաժամանակ, առաջարկության ընդունման կապակցությամբ համապատասխան փոփոխություն է կատարվել նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում

		«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում հոդվածների առանձին-առանձին թվարկելու փոխարեն՝ մեկ ընդհանուր դրույթով սահմանել, որ «համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «աշխատակազմ» բառով՝ համապատասխան հղվածներով:	Ընդունվել է, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ: